ԱՐՏԱՔԻՆ ԴԻՏՄԱՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԴԻՏՄԱՆ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բագրատյան Ազատ
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի
օպերատիվ-հետախուզական գործունեության և
քրեագիտության ամբիոնի դոցենտ,
ոստիկանության փոխգնդապետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Սույն հոդվածում ուսումնասիրվում են դիտման օպերատիվ-հետախուզական և քրեադատավարական դրսևորումները տարբեր երկրների օրենքներում, ենթաօրենսդրական իրավական ակտերում: Անդրադարձ է կատարվում հետխորհրդային տարածքի, ինչպես նաև անգլո-սաքսոնական և ռոմանո-գերմանական իրավական համակարգի որոշ պետություններում գոյություն ունեցող կարգավորումներին: Միաժամանակ զուգահեռներ են անցկացվում ազգային օրենսդրությամբ նախատեսված արտաքին և ներքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների միջև: Տվյալ համատեքստում շոշափվում են հարցեր և առաջարկվում լուծումներ՝ գործող նորմատիվ իրավական ակտերը կատարելագործելու նպատակով:

Բանալի բառեր՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն, օպերատիվ-հետախուզական միջոցառում, գաղտնի քննչական գործողություն, արտաքին դիտում, ներքին դիտում:

Ժամանակը և գիտատեխնիկական առաջընթացն զգալիորեն ազդեցություն են գործել օպերատիվ-հետախուզական գործունեության ակունքներում գտնվող դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառման վրա՝ զարգացնելով դրա բովանդակությունը և անցկացման

ընթացքում կիրառվող հնարքները: Դրա հետ մեկտեղ դիտումը բազմաբնույթ դրսևորումներով ամրագրված է տարբեր երկրների ազգային օրենսդրությունում՝ մի կողմից դիտարկվելով օպերատիվ-հետախուզական միջոցառումների լույսի ներքո, մյուս կողմից ձեռք բերելով վարութային գործողությունների կերպարանք: Որպես օրինակ՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՌԴ օրենքը նախատեսում է դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառումը, որը միավորում է արտաքին դիտումը և ներքին դիտումը: Թեպետ այս օրենքը չի ներառում օպերատիվ-հետախուզական միջոցառումների սահմանումները, այնուհանդերձ, ըստ ՌԴ Սահմանադրական դատարանի որոշման, դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրենից ներկայացնում է անձի վարքագծին տեսողական, էլեկտրոնային կամ համակցված եղանակով հետևելու և այն վերահսկելու գործընթաց, որն ուղղված է հանցավոր գործունեության հատկանիշների մասին և այլ տեղեկությունների ձեռքբերմանը՝ օպերատիվ-հետախուզական գործունեության խնդիրները լուծելու համար[1]:

Օպերատիվ-հետախուզական մեկ միջոցառման տեսքով արտաքին և ներքին դիտումն արտահայտվում են նաև «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Բելառուսի Հանրապետության օրենքում՝ ըստ որի դիտումը բնորոշվում է որպես բնակարանում, շենքում, շինությունում, կառույցում, տրանսպորտային միջոցում, այլ օբյեկտում և կազմակերպության տարածքում, տեղանքում տեղի ունեցող անձանց արարքների, երևույթների, գործընթացների, իրադարձությունների անմիջական կամ միջնորդավորված տեսողական կամ այլ ընկալում, որը կատարվում է օպերատիվ-հետախուզական գործունեության խնդիրները լուծելու համար տեղեկություններ ձեռք բերելու նպատակով:

Հետխորհրդային տարածքի որոշ երկրներում, օրինակ՝ Ուկրաինայում, Լատվիայում, Մոլդովայում, Ղազախստանում, Ղրղզստանում, քննարկվող միջոցները դիտարկվում են նաև քրեադատավարական տեսանկյունից, ինչն ավելի բնորոշ է անգլո-սաքսոնական և ռոմանո-գերմանական իրավական համակարգի պետություններին: Մասնավորապես, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենքն իր մեջ

[1] **Տե՛ս Определение КС РФ от 21.10.2008 № 862-О-О „Об отказе в принятии к рассмотрению жалобы гражданина Камалиева Марата Дамировича за нарушение его конституционных прав статьёй 6 ФЗ „Об оперативно-розыскной деятельности“, https://www.consultatnt.ru/document/cons_doc_LAW_84722/ (վերջին մուտք՝ 20.02.2024):**

ընդգրկում է դիտում օպերատիվ-հետախուզական ընդհանուր միջոցառումը, ինչպես նաև ձայնագրման և (կամ) տեսագրման եղանակով անձի կամ տարածքի գաղտնի վերահսկում օպերատիվ-հետախուզական հատուկ միջոցառումը: Օրինակ՝ վերջինս իրենից ներկայացնում է ձայնագրող, տեսագրող կամ հատուկ գիտատեխնիկական այլ միջոցների օգտագործմամբ կոնկրետ վայրում խոսքային և այլ տեղեկությունների, ինչպես նաև անձի գործողությունների և (կամ) դեպքերի գաղտնի վերահսկում և նյութական կրիչի վրա արդյունքների ամրագրում՝ անհրաժեշտության պարագայում գաղտնի ներթափանցելու և (կամ) հետազոտելու միջոցով[2]: Միևնույն ժամանակ, Ղազախստանի Հանրապետության քրեական դատավարության օրենքը ներառում է նմանատիպ գաղտնի քննչական գործողություններ՝ անձի կամ տարածքի գաղտնի դիտում, ձայնագրման և տեսագրման եղանակով անձի կամ տարածքի գաղտնի վերահսկում: Մասնավորապես, անձի կամ տարածքի գաղտնի դիտման ընթացքում կարող է կատարվել լուսանկարում և տեսագրում, սակայն արգելվում է տեխնիկական միջոցների օգտագործումը, որոնք ձայնագրում են խոսքային և ձայնային այլ տեղեկությունները[3]:

Ինչպես նշվեց, անգլո-սաքսոնական և ռոմանո-գերմանական իրավական համակարգի երկրներում քրեական դատավարության օրենքը նախատեսում է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ հիշեցնող վարութային գործողություններ: Մասնավորապես, Ֆրանսիայի Հանրապետության քրեական դատավարությունում քննարկվող միջոցներն են՝

1. Տեխնիկական միջոցների կիրառմամբ անձանց, տրանսպորտային միջոցների կամ այլ առարկաների տեղորոշումը և հայտնաբերումը.

2. Թռչող սարքերի կիրառմամբ հասարակական վայրերի վերահսկումը և արդյունքների ամրագրումը.

3. Հանցագործության կատարման մեջ կասկածվող անձանց նկատմամբ իրականացվող դիտումը, հանցագործության ընթացքում օգտագործված կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաների տեղափոխման վերահսկումը.

---

[2] Տե՛ս Закон Республики Казахстан „Об оперативно-розыскной деятельности“, http://law.gov.kz/client/#!/ doc/104334/rus **(վերջին մուտք՝ 12.02.2024)**:

[3] Տե՛ս Уголовно-процессуальный кодекс Республики Казахстан, http://law.gov.kz/client/#!/doc/81164/rus **(վերջին մուտք՝ 15.02.2024)**:

4. Որոշակի վայրերի կամ տրանսպորտային միջոցների վերահսկումը ձայնագրման և տեսագրման համակարգերի օգնությամբ:

Ֆրանսիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը բավականին մանրամասն նկարագրում է նշված գործողություններին առաջադրվող պայմանները և դրանց իրականացման սահմանափակումները: Այսպես, իրավական այս կարգավորումները չեն վերաբերում այն դեպքերին, երբ տեղորոշումն ուղղված է էլեկտրոնային հաղորդակցության տերմինալ համակարգերի, ինչպես նաև տուժողի տրանսպորտային միջոցի կամ ցանկացած այլ օբյեկտների, անհայտ կորած անձանց հայտնաբերմանը[4]:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում դիտումը դրսևորվում է հետևյալ գործողություններում՝

1. տեխնիկական միջոցների կիրառմամբ ոչ հրապարակային խոսակցությունների լսումը և ձայնագրումը բնակարանում.

2. տեխնիկական միջոցների կիրառմամբ ոչ հրապարակային խոսակցությունների լսումը և ձայնագրումը բնակարանից դուրս.

3. բնակարանից դուրս կատարվող լուսանկարումը, տեսագրումը և տեսաձայնագրումը, այդ թվում՝ արբանյակների հնարավորություններն օգտագործելով.

4. հատուկ տեխնիկական այլ միջոցների կիրառմամբ բնակարանից դուրս կատարվող դիտումը: Տեխնիկական այլ միջոցներից են տեղորոշիչ սարքերը (պելենգատորները), GPS հաղորդիչները, շարժմանն արձագանքող ազդանշանային համակարգերը, էլեկտրոնային հաղորդում ստանալը հաստատող ծրագրային միջոցները, գիշերային դիտման սարքերը և այլն[5]:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեադատավարական օրենքով՝ վարույթի շրջանակներում արգելվում է օպտիկական դիտում իրականացնել բնակարանում, մինչդեռ

---

[4] Տե՛ս Ֆրանսիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 230-32 – 230-44, 230-47 – 230-53, 706-80 – 706-80-2, 706-96 – 706-98 հոդվածները, https://www.legifrance.gouv.fr/codes/texte_lc/LEGITEXT000006071154/ **(վերջին մուտք՝ 12.02.2024)**:

[5] Տե՛ս **Головенков П., Спица Н.**, Уголовно-процессуальный кодекс ФРГ: научно-практический комментарий и перевод текста закона, Потсдам, 2012. – 155-158, 163-167 էջեր, Уголовно-процессуальное право ФРГ: Учебник. 6-е изд., с доп. и изм. / Вернер Бойльке; Пер. с нем. **Я. М. Плошкиной**, под ред. **Л. В. Майоровой**, Красноярск: РУМЦ ЮО, 2004. – 158-160 էջեր:

կանխարգելիչ միջոցառման կարգավիճակով այն թույլատրված է վարչական ոստիկանական իրավունքի նորմերով, մասնավորապես՝ «Քրեական ոստիկանության դաշնային ծառայության մասին», «Սահմանադրության պաշտպանության դաշնային ծառայության մասին» Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենքներով:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում օպերատիվ-հետախուզական միջոցառումները, այդ թվում՝ արտաքին դիտումը, էլեկտրոնային դիտումը, կարգավորվում են ԱՄՆ նախագահի հրամանագրերով, ԱՄՆ գլխավոր դատախազի հրամաններով, նորմատիվ իրավական այլ ակտերով: Վարչական իրավաստեղծ գործունեությունը մանևրելու հնարավորություն է տալիս, քանի որ վարչական ակտն ավելի հեշտ է փոփոխել կամ չեղարկել, քան օրենսդրականը[6]: Նման կարգի միջոցներ նախատեսված են նաև ԱՄՆ քրեական դատավարության օրենքում: Մասնավորապես՝ խոսակցությունների էլեկտրոնային լսումը և դիտումը թույլ է տալիս առանց «ֆիզիկական միջամտության» ներթափանցել մասնավոր հարաբերությունների տիրույթ: Եվ թեպետ դատավարական այս միջոցի կարիքը նախկինում առաջանում էր միայն այն դեպքում, երբ հանցավոր ոտնձգություն կատարելու համար նախատեսված էր պատիժ՝ մեկ տարին գերազանցող ազատազրկման տեսքով, սակայն հետագայում առաջադրվող պահանջներն աստիճանաբար նվազեցվել են և գրեթե նույնացվել խուզարկությանը բնորոշ պայմանների հետ[7]:

Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությունը բովանդակում է արտաքին դիտում և ներքին դիտում ինչպես օպերատիվ-հետախուզական միջոցառումները, այնպես էլ գաղտնի քննչական գործողությունները: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ արտաքին դիտումն առանց բնակարանի անձեռնմխելիության սահմանափակման հատուկ կամ այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց անձանց հետևելը կամ առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքը վերահսկելն է բաց տարածությունում, հանրային վայրերում,

---

[6] Տե՛ս **Смирнов М. П.**, Оперативно-розыскная деятельность полиции зарубежных стран, М.: Центр юридической литературы «Щит», 2001. – 177,178 էջեր:

[7] Տե՛ս **Пешков М. А.**, Арест и обыск в уголовном процессе США, М.: Спарк, 1998. – 87-94 էջեր, **Стойко Н. Г., Семухина О. Б.,** Уголовный процесс в США: Учебное пособие / Красноярский государственный институт, Красноярск, 2000. – 79-83 էջեր:

բնակարան չհանդիսացող փակ տարածությունում՝ լուսանկարման, տեսագրման կամ տեսաձայնագրման միջոցով էլեկտրոնային կամ այլ կրիչների վրա դիտման արդյունքների ամրագրմամբ: Հասկացության վերլուծությունը թույլ է տալիս տարբերակել այս միջոցառման հետևյալ տեսակները՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ և առանց տեխնիկական միջոցների: Տեխնիկական միջոցների օգտագործումն ինքնին ենթադրում է արդյունքների ամրագրում լուսանկարման, տեսագրման կամ տեսաձայնագրման միջոցով, ինչն իրագործելի չէ այդ միջոցների բացակայության պայմաններում: Ինչպե՞ս լուսանկարել, տեսագրել կամ տեսաձայնագրել հետաքրքրություն ներկայացնող անձի գործողությունները, եթե օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացվում է առանց տեխնիկական միջոցների: Հետևապես, տեխնիկական միջոցներով կամ առանց դրանց արտաքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումը թույլատրելով պետք է զուգահեռաբար սահմանել նաև լուսանկարման, տեսագրման, տեսաձայնագրման առկայության կամ բացակայության հնարավորությունը:

Զգայական օրգանները փոխարինում են տեխնիկական միջոցներին, երբ վերջիններիս օգտագործումը նախատեսված չէ օպերատիվ-հետախուզական միջոցառման ընթացքում: Եթե լուսանկարման և տեսագրման այլընտրանք է անմիջական տեսողական դիտարկումը, ապա տեսաձայնագրումը մեկտեղում է տեսողական և լսողական բաղադրիչները: Բայց և այնպես, ըստ գործող օրենսդրական նորմերի, բացառապես ձայնագրման միջոցով արտաքին դիտումը որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում չի անցկացվում: Այնուհանդերձ, լսողական օրգանների օգնությամբ ստացված տվյալներն էականորեն բարձրացնում են միջոցառման արդյունավետությունը, արտահայտվում արձանագրությունում: Մասնավորապես՝ օպերատիվ ստորաբաժանման աշխատակիցը լսում է, թե ինչպես է անձը, որի նկատմամբ անցկացվում է օպերատիվ-հետախուզական միջոցառումը, հայտնում հափշտակված գույքը թաքցնելու տեղը, հանցավոր խմբի անդամների անունները: Ավելորդ չէ արձանագրել, որ համանուն գաղտնի քննչական գործողության արդյունքներն ամրագրվում են նաև ձայնագրման եղանակով: Իմ կարծիքով, նույն մոտեցումն անհրաժեշտ է ցուցաբերել նաև արտաքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառման պարագայում՝ սահմանելով համապատասխան իրավական կարգավորումներ:

Որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում՝ արտաքին դիտում իրականացվում է դատարանի որոշմամբ, եթե արդյունքների ամրագրումը հնարավոր չէ առանց տեխնիկական միջոցների օգտագործման, և անձը, որի նկատմամբ իրականացվում է արտաքին դիտումը, ողջամտորեն չէր կարող ենթադրել դրա անցկացման հնարավորության մասին: Հետևապես, դատարանի որոշումը պահանջվում է երկու հատկանիշների միաժամանակյա առկայության պարագայում՝ առանց տեխնիկական միջոցների օգտագործման հնարավոր չէ ամրագրել միջոցառման արդյունքները, և անձը չէր կարող ենթադրել դրա հնարավոր իրականացման մասին: Այսինքն՝ եթե անձը գիտակցում է արտաքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման հնարավորության մասին, ապա դատարանի որոշումը հարկավոր չէ, այդ թվում՝ տեխնիկական միջոցներ կիրառելիս: Այս ձևակերպումն ավելի շատ հարցեր ու խառնաշփոթ է առաջացնում, քան իրական լուծում առաջարկում: Օրենսդրական հստակ չափանիշների բացակայությունը պարարտ հող է ստեղծում դատական վերահսկողության օղակը շրջանցելու համար: Հանցավոր ոտնձգություն նախապատրաստող, կատարող կամ կատարած ցանկացած անձ, բնականաբար, կարող է ենթադրել օպերատիվ-հետախուզական գործունեության մարմինների տեսադաշտում հայտնվելու մասին, սակայն ինչպե՞ս համոզվել՝ նրանի՞ց ստանալ այդ հավաստիացումը... Դրանից բացի, ըստ ուսումնասիրվող նորմի, անձի ենթադրությունները պարզելու պահանջն առաջադրվում է արդեն անցկացվող միջոցառման ընթացքում՝ չնայած նրան, որ այդ ենթադրությունները վերաբերում են արտաքին դիտմանը նախորդող ժամանակահատվածին: Իհարկե, անձի կողմից գիտակցելու հնարավորությունը հաշվի է առնվում օպերատիվ-հետախուզական միջոցառումները պլանավորելիս և դրանց մարտավարությունն ընտրելիս, սակայն նշված հանգամանքների մասին եզրահանգումներն օպերատիվ ստորաբաժանման աշխատակցի մտավոր գործունեության արդյունք են, այլ ոչ թե այն անձի, որի նկատմամբ անցկացվում է օպերատիվ-հետախուզական միջոցառումը: Անգամ օպերատիվ ստորաբաժանման աշխատակցի ենթադրությունները տվյալ դեպքում տեղին չէ որպես պայման ընդունել արտաքին դիտումն անցկացնելիս, քանի որ դատարանի որոշումը կայացնելու պահանջը կարող է անտեսվել և փոխարինվել օպերատիվ ստորաբաժանման աշխատակցի որոշմամբ: Այս ամենը վկայում է այն մասին, որ տեխնիկական միջոցների

օգտագործումն արդեն իսկ բավարար հիմք է դատարանի թույլտվությամբ արտաքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու համար:

Ներքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառման սահմանումը ներդաշնակ է այն առումով, որ տեխնիկական միջոցներով կամ դրանց բացակայությամբ պայմանավորված օպերատիվ տեղեկություններն ամրագրվում են ձայնագրման, լուսանկարման, տեսագրման, տեսաձայնագրման միջոցով կամ առանց դրանց: Ի տարբերություն առանց տեխնիկական միջոցների արտաքին դիտմանը, որը լայնորեն տարածված է և դատարանի թույլտվություն չի պահանջում, առանց տեխնիկական միջոցների ներքին դիտումը գործնականում չի կիրառվում և ընդհանուր առմամբ անցկացվում է միմիայն դատարանի որոշմամբ: Օպերատիվ տվյալների ամրագրման եղանակը մեծապես ազդում է դրանց հետագա ճակատագրի վրա: Տեխնիկական միջոցների օգտագործումը թույլ է տալիս վարույթ իրականացնող մարմնին օբյեկտիվորեն գնահատել ստացված արդյունքները և իբրև արտավարութային փաստաթղթեր՝ վերջիններս ընդգրկել ապացուցողական զամբյուղում: Առանց տեխնիկական միջոցների ներքին դիտման արձանագրությունն արտացոլում է միջոցառման մասնակիցների անմիջական ընկալումները: Նման իրավիճակներում ապացույց ճանաչելու գործընթացը կարող է հանգեցնել օպերատիվ տեղեկությունների ստացման աղբյուրի բացահայտմանը: Այս հիմնավորումներն արդիական են նաև ներքին դիտում գաղտնի քննչական գործողության պարագայում, քանի որ, համաձայն քրեական դատավարության կանոնների, այն կատարվում է տեխնիկական միջոցներով կամ առանց դրանց: Տվյալ համատեքստում նպատակահարմար եմ համարում ներքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառման և գաղտնի քննչական գործողության անցկացման ընթացակարգային պարտադիր պայման դիտարկել բացառապես տեխնիկական միջոցների օգտագործումը և դրանց օգնությամբ ամրագրված արդյունքները:

Ամփոփելով արտահայտած կարծիքները՝ անհրաժեշտ եմ համարում համապատասխան փոփոխություններ նախատեսել քննարկվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների մասով՝ գործող օրենսդրությունը կատարելագործելու և վերջինիս կիրառական նշանակությունը բարձրացնելու համար:

ОПЕРАТИВНО-РОЗЫСКНЫЕ И УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ НАРУЖНОГО И ВНУТРЕННЕГО НАБЛЮДЕНИЯ

Багратян Азат
Доцент кафедры оперативно-розыскной деятельности и криминалистики академии образовательного комплекса МВД РА, подполковник полиции, кандидат юридических наук, доцент

В научной статье изучаются оперативно-розыскные и уголовно-процессуальные аспекты наблюдения, нашедшие своё отражение в законах и подзаконных актах различных государств. Рассматриваются правовые решения, распространённые на постсоветском пространстве, а также в странах англо-саксонской и романо-германской системы права. Вместе с этим в рамках национального законодательства проводится сравнительно-правовой анализ исследуемых оперативно-розыскных мероприятий и негласных следственных действий. В этой связи предлагаются поправки с целью совершенствования действующего законодательства.

Ключевые слова: оперативно-розыскная деятельность, наружное наблюдение, внутреннее наблюдение, оперативно-розыскное мероприятие, негласное следственное действие.

THE OPERATIVE-SEARCH AND CRIMINAL PROSECUTION CHARACTERISTICS OF EXTERNAL AND INTERNAL SURVEILLANCE

Azat Bagratyan
Associated Professor at the Chair of
Operative-Search Activity and Criminology,
Police Academy of the Ministry of
Interior Affairs of the Republic of Armenia,
Police Semi-Colonel,
Doctor of Law

This article studies the manifestation of operative-search and criminal prosecution of surveillance in the laws and normative legal acts of different countries. Here, it refers to the existing regulations of the states of the post-soviet space, as well as to several countries from the Anglo-Saxon and Romano-Germanic judiciary systems. At the same time, parallels are drawn between the operative-search activities of the external and internal surveillance and secret investigative activities at the national legislative level. Within this context, some questions are being discussed and solutions are proposed in order to improve the existing normative legal acts.

Keywords: operative-search activity, operative-search measures, secret investigations, external surveillance, internal surveillance.

Հոդվածը գրախոսվել է՝ 21.02.2024թ.
Ներկայացվել է տպագրության՝ 01.03.2024թ.